ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԱՐՄԱՎԻՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ՀՀ, Արմավիրի մարզի Արմավիր համայնք
ՀՀ ք.Արմավիր ,Հանրապետության փ. 32, Հեռ. (0237) 2-36-54,
էլ. փոստ՝ armavirmunicipality@gmail.com

26 հունվարի 2024թ.

ԾԱՆՈՒՑՈՒՄ

Պայմանագիրն ամբողջությամբ միակողմանի լուծելու մասին

ԱՎԳՈՄԵ ՇԻՆ ՍՊԸ-ի
տնօրեն՝ Իշխան Ավագյանին

Հարգելի Իշխան Ավագյան

ՀՀ Արմավիրի մարզի Արմավիրի համայնքապետարանի (այսուհետ՝ Գնորդ) և ԱՎԳՈՄԵ ՇԻՆ ՍՊԸ-ի (այսուհետ՝ Վաճառող) միջև 2023թ.-ի հոկտեմբերի 30-ին կնքել է համաձայնագիր, որով ուժի մեջ է մտել 2023թ.-ի օգոստոսի 28-ին կնքված **ԱՔ-ԷԱՃԱՊՁԲ-23/6-6** ծածկագրով գնման պայմանագիրը (այսուհետ՝ Պայմանագիր): Պայմանագրի շրջանակներում Վաճառողը ստանձնել է պարտավորություն մատակարարել Պայմանագրի թիվ 1 հավելվածով սահմանված ապրանքները: Վաճառողին տրվել է 20 օրացուցային օր ժամանակ ապրանքները մատակարարելու համար, սակայն սահմանված ժամկետում Վաճառողի կողմից մատակարարում չի կատարվել:

Հաշվի առնելով վերոգրյալը՝ Պայմանագիր կնքած անձի կողմից ստանձնված պարտավորությունները չկատարելու հիմքով ՀՀ Արմավիրի մարզի Արմավիրի համայնքապետարանը հարկադրված է 2024թ.-ի հունվարի 26-ից Պայմանագիրն ամբողջությամբ միակողմանի լուծել: Պատշաճ ծանուցումն ապահովելու նպատակով կիրառելով ՀՀ կառավարության 04.05.2017թ. թիվ 526-Ն որոշմամբ հաստատված գնումների գործընթացի կազմակերպման մասին կարգի 33-րդ կետի 17-րդ ենթակետով սահմանված դրույթները:

Միաժամանակ հայտնում ենք, որ Վաճառողին տրվում է 3 աշխատանքային օր՝ որակավորման և պայմանագրի ապահովումները՝ համապատասխանաբար 902400 (ինը հարյուր երկու հազար չորս հարյուր) ՀՀ դրամի և 601600 (վեց հարյուր մեկ հազար վեց հարյուր) ՀՀ դրամի չափով, վճարելու համար: Փոխանցումը անհրաժեշտ է կատարել Գնորդի բանկային հաշվին **(ՀՀ Ֆինանսների նախարարություն 900335201092)**:

Սահմանված ժամկետում փոխանցումը չկատարելու դեպքում պարտավորվում ենք որոշում կայացնել <<Գնումների մասին>> ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6/ա-րդ կետի համաձայն ԱՎԳՈՄԵ ՇԻՆ ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով:

Հարգանքով՝

Արմավիր համայնքի ղեկավար՝ **Վ. Սարգսյան**